10. ՌԱՆՉՊԱՐԻ ՏՂԵՆ

Ժամանակոց ռանչպարի մեկը գնացել էր արտ վարելու։ Ցորեկվան ընտուր կնիկը ուզեց, որ հաց տանի մարդուն։

Էդ մարդը օխտը տարեկան մեկ տղա ուներ։ Տղեն մորն ըսավ.

— Անա, հորս համար դու հաց մի տանի, թող ես տանիմ։

Մերն ըսավ.— Օղուլ, դու հըլը պզտիկ ես, արտն ի՞նչ գիտես, որ հաց տանես։

Տղեն մորը շատ աղաչեց ու ըսավ.— Քալա շան, հոգուդ մեռնիմ, ես արտը կը գտնիմ, դու մի՛ վախենա։

Վերջապես մերը կամավորավ, հացը դրեց դաստախունի մեջ, կապեց տղի մեջքին, կերակուրն էլ լցրեց ամանը ու ճամբու դրեց։ Տղեն հացն առավ գնաց ու առանց շշկլելու դյուզ տարավ հասցրեց հոր մոտ։

Հերը հարցրեց.— Որդի, դու արտն ի՞նչ գիտեիր, որ ընձի հաց բերիր... որ էդպես է, դե՛ գնա հացը հազրե, գանք ուտենք։

— Չէ՛, ափար,— ըսավ տղեն,— մեկ քիչ համբերե, հիմի մեզի էրկու ձիավոր ղոնաղ պտի գան, երբոր էկան, նոր ուտենք։

— Մենք ռանչպար մարդ ենք,— ըսավ հերը,— մեզի ո՞վ պտի ղոնաղ գա... քեզի հազար եմ ըսել, թե գլխեդ դարտակ խոսքեր մի դուս տա, գնա՛ հաց դիր ուտենք, մեկ քիչ դինչանանք։

Հեր ու տղա երբոր իրար հետ էսպես կը խոսեին, տեսան որ, ահան, էրկու ձիավոր դրպա իրանց դուքան։ Երբոր ձիավորները հա-

սան ըտոնց քովը, աղեն ըսավ,— Աղանե՛ր, համեցեք հաց կերեք։

Ձիավորները իրար երես աշեցին ու աչքով ունքով իրար հասկացրին թե. «էս պզտի տղա է, ու իրանք էլ ռանչպար մարդիկ, ըստոնք ի՞նչ պտի ունենան, որ մենք ուտենք»։

Ըստոնք հլա էդ մտքի հետ էին, որ տղեն էն սհաթը հոր համար բերած հացի բողչեն բացեց ու խոսքը թարքրեց, որ գան ուտեն։

Ձիավորները շատ էլ չէին ուզե, համա ի՞նչ էնեին, իլլաճսըզ ձիաներուց վեր էկան, հաց կերան ու շնորհակալություն տվին իրանց պատվող մարդոցը։

Հացից ետև, տղեն ուժ ու կող էրավ, հարցուց.— Աղաներ, դուք ո՞ւրտից գուքաք ու էդպես ո՞ւր կէրթաք։

Ընտոնք էլ պատասխան տվին թե.— Մեր թագավորի տղեն շատ սաստիկ, բեիլլաճ ընկած, հիվանդ է, Լոխմանի հեքիմը Հալապ քաղաքն է, կէրթանք ընտուր ետևեն, որ բերենք, բալքի թե գա, սաղցնե։

Տղեն նորեն ըսավ.— Լոխմանին հիմի Հալապ չէ, Շամ է։

Ընտոնք էլ ըսին թե.— Մենք իմացել ենք, որ Հալապ է, դու ընչե՞ն գիտես, թե Շամ է գնացել։

— Ընչեն որ դիտեմ, չեմ գիտե, էդ թող մնա, հըմա դուք իմ խոսքիս հավատացեք,— ըսավ տղեն,— ղուր տեղը մի չարչրվեք, գնացեք դրպա Շամ, նա քաղքի ղրաղը, մեկ նշանով տեղ, ձեզի ռաստ գուքա, կառնիք հետներդ կըտանիք։

Ինչպես որ էդ տղեն ըսել էր, ձիավորները գնացին էնպես էլ Լոխմանուն գտան ու առան հետները տարան։

Ճամբեն գնացած վախտը Լոխմանին ձիավորներուն հարցուց թե.— Ի՞նչպես էղավ, որ դուք էկաք ընձի գտաք, քանի որ ես Հալապ էի, ձեզի ո՞վ ըսավ, թե Շամ եմ գնացել։

Ձիավորները ըսին.— Ճամբեն մեկ ռանչպարի ռաստ էկանք, որ իրան համար վար ու ցանք կեներ, էն մարդը մեզի հաց կերցուց, պատվեց։ Ընտուր մեկ օխտը տարեկան պզտի տղեմ ուներ, նա մեզի ըսավ քու տեղդ։ Ընտուր ըսածի պես էլ էկանք քեզի գտանք։

Էս բանը որ լսեց Լոխմանին, ինքն իրան մեջը ոխակալավ ու ըսավ թե. «Հիմիկուց որ էդ տղեն իրան պզտի հասակի մեջ էդքան գիտուն ու իմաստուն է, էգուց օր մենծացավ, ի՞նչ պտի էղնի իմ հալը, անպատճառ հացս ձեռես պտի խլե։ Չէ՛, ես պետք է ըտուր գլխուն մեկ լավ խաղ խաղամ, որ փչանա ու չէղնի թե ետնավուր իմ հացս խլե ու անունս կոտրե»։

Վերջապես երբոր հասան թագավորի քովը (թագավորը Բաղ-

դատ կը նստիր[1]) թագավորն հարցուց Լոխմանուն թե.— Ի՞նչ է հարկավոր, որ տղես լավնա։

Լոխմանին սարեն, քոլեն բաներ հարցուց հիվանդին, յանի թե քննեց, իմացավ ցավը (հըմը իրան փորի ցավը ուրիշ էր—դարտը կապուտ էր) ու ըսավ թագավորին.— Անատոլու երկրի մեշ մեկ ռանչպարի օխտ տարեկան տղա կա, քու ձիավորներդ տեղը գիտեն, ընտուր պետք է բերել տաս մորթենք, պլոճիկներն ու սիրտը հանենք տղիդ ուտեցնենք, որ սաղնա, մորե մեկ էղնի, թե որ չէ՝ էլ ուրիշ հնարք չկա։

Թագավորը էն սահաթին ձիավորներ հանեց, շատ օսկի տվեց ու հրամայեց, որ էրթան Անատոլու երկիրը, էն ռանչպարի օխտ տարեկան տղին թե՛ խաթրով, թե՛ զորով ու թե՛ փողով առնեն գան.— Չէղնի թե,— ըսավ,— ըսեք սպանելու համար է, հըպա ըսեք, թե թագավորին պետք է ու ժամանակին էլի թեզ դառնա գուքա։

Էսպես թամբեհներով ձիավորներուն ճամբու դրեց։

Ձիավորները ճամբա ընկան գնացին, գնացին, շատ ու քիչն աստված գիտե, հասան Անատոլի։ Ռանչպարին գտան ու թագավորի հրամանը հայտնեցին։

Ռանչպարը էս որ իմացավ, կեծակի զարկած դառավ, ու ըսավ.

— Թագավորը սաղ էղնի, նա ի՞նչ գիտե, թե ես ով եմ, իմ տղիս ի՞նչ կը ճանչնա... Ես մեկ քյասիբ մարդ եմ, իմ տղիս ընչի՞ պետք է ուզե...

Հըմը տղեն շատ իմաստուն ու գիտնակ էր, էն սահաթին հասկըցավ բանի էությունը, հորը գողտուկ ըսավ թե.— Դու մի վախենա, քու բավականությունդ թագավորի մարգոցեն ա՛ռ ու քեֆիդ ապրի, ընձի թող էրթամ։ Աստված օղորմած է, ես կէրթամ ու էլի սաղ-սալամաթ ետ գուքամ։

Ռանչպարն էլ տղի խոսքերեն սիրտ առնելով, բավականին օսկի առավ ու տղին օրհնելով թողեց որ էրթա։

Ձիավորները տղին հետներն առած, ուրախ-ուրախ գնացին հասան թագավորի երկիրը։ Էդ տանող մարդիկը տղին հանեցին թագավորի ու Լոխմանու երեսը, ընտոնք էլ տեսան։ Ջունքի էդ օրը ուրիշ բաներ ունեին—պարապ չէին, թագավորը վազիրին ըսավ, որ տղին տանի պահե մինչև առավոտ։

Վազիրն էր, տղին առավ գնաց իրանց տուն, մեկ ջոկ օտի մեջ տեղ տվեց, ինքն էլ պահապանի պես քովը մնաց։ Հըմը անվերջ ա՞խ

---

[1] Բացատրությունը ասացողինն է (Ս. Բ.)։

ու վա՜խ էնելով օտի մեջ գյահ կը պտրտեր, գյահ կը նստեր, միտք կէներ ու չէր կրնա դադար մնա։

Տղեն էս բանը վաղուց վարավուրդ էր էրել, հըմը ահուն ձեն չէր հանե։ Մեկ էլ ինքն իրան ըսավ. «Գյոռ ու ջահնամ, ինչ կէղնի թող էղնի, ես էս մարդու ցավը պտի հարցնեմ իմանամ»։ Դարձավ ըսավ.— Աղա վազիր, քու ցավդ ի՞նչ է, որ դու էդքան կը տրորվիս։

Վազիրը սրտեն մեկ խորունկ ախ քաշելով ըսավ.— Աստված էլ գիտե, այ տղա, որ ես դարդ ու պակասություն չունիմ, մենակ իմ դարդս ու կրակս էն է, որ Լոխմանու հրամանով առավոտ քեզի պըտի սրպանեն, պլոճիկներդ ու սիրտդ թագավորի տղին կերցնեն, որ հիվանդություն աղատվի։

— Թե որ էդպես է,— ըսավ ռանչպարի տղեն,— որ ընձի վրա էդքան կը ցավիս, ըտուր հնարքը շատ ղոլայ է։ Էս ղոճա քաղաքի մեջը մեկ պզտի, իմ հասակիս, մեռելմ չկա՞, ընտուր պլոճիկներն ու սիրտը հանել տուր, տար թագավորին ու Լոխմանուն։ Ընտոնց էլ հավատացրու, յանի թե ես քու տեղդ կը փախնեի, ետևիցս ընկար, զարկիր սրպանեցիր ու տարածդ իմ պլոճիկներս ու սիրտս են, էդպես-սով ես էլ կազատվիմ, դու էլ։

Էս բանը վազիրի խելքը մտավ, տեսավ, որ տղեն շատ խելոք կըսե։ Ընտուր խոսքին հավատալով, գնաց թազա մեռել գտավ, պլոճիկներն ու սիրտը հանել տվեց, ղրավ մեկ լանկյառու մեջ և տարավ թագավորին ու Լոխմանուն։

Ծրբոր տեսան, հարցուցին թե,— էս ի՞նչ բան է, դու ընչի՞ սրպանեցիր...

Վազիրը առանց ահ ու երկյուղի ըսավ,— Թագավորն ապրած կենա, էդ տղեն ընձնեն գողտուկ տնեն փախել էր, ընկա ետևեն, արուն քրտինք մտնելով հասա, բռնեցի ու բարկություն չըկրցա զավթել, թրով զարկի գլուխը կտրեցի, պլոճիկներն ու սիրտը առա բերի։ Գիտեի, որ մենակ ըստոնք են ձեզի հարկավոր։ Հիմի բանը որ էսպես էղավ, ինչպես գուզես էնպես հրամայե։

Լոխմանու սրտի ուզածն էլ էդ էր, ինքն իրան ուրախցավ, վազիրի խոսքերին հավատաց ու իրան գիտեցածի պես դեղ էրավ թագավորի տղին սաղցուց։

Ըստուց ետև վազիրը երբոր միամտավ, ռանչպարի տղին գողտուկ փախցուց, որ գնաց հասավ իրան հոր երկիրը։

Շատ ու քիչն աստված գիտե, մեկ վախտ ու ժամանակ որ անցավ, Մսրա երկրի թոռճիքը[1] մեկ օր, առավոտնեն մինչև իրիկուն թոռ քցելով հոդիքը դուս գուքա, հըմը մեկ ձուկ էլ չեն կրնա բռնե։

[1] Ձկնորսները (Ս. Բ.)։

Իրիկվա դեմ, տուն դառնալու վախտը, թոռճու մեկը կըսե,— էս մեկ թոռն էլ կը քցեմ, իմ բախտես՝ ինչ դուս գուքա, թող գա։

Երբոր թոռը ջրեն դուս կը քաշե, կը տեսնի որ, ինչ տեսնի, էնպես մեկ պատվական, գեղեցիկ ու նաշխուն ձուկ դուս էկավ, որ սիրունությունեն օխտը զանատ չես կրնա երեսն աշե, էնքան որ անլման սիրուն էր։

Թոռ քցողը դառնա ընկերներուն կըսե,— Թամամ քսան տարի է ես թոռճի եմ, էսպես սիրուն ձուկ չեմ տեսած, ես ըստուր ոչ կը սըպանեմ, ոչ էլ նորեն կը թողնեմ, ամանով ջրի մեջ կը քցեմ ու կը տանիմ թագավորին, հալբաթ մեկ բան ընձի փեշքեշ կուտա։

Խոսք մեկ էնելով ընկերների հետ կառնեն կտանեն թագավորին։

Երբոր թագավորի մարդիքը իրան հայտնեցին ձկի բերելու համար, հրաման տվեց թե,— Բերեք տեսնեմ, ի՞նչպես ձուկ է։

Թոռճիքը ձուկը ներս տարան, թագավորը տեսավ, զարմացավ ըստուր գեղեցկությյան ու նաշխունությյան վրա, շատ ուզեց-սիրեց ու իրան վազիրներին էլ կանչեց, որ գան թամաշ էնեն։ Ընտուց ետև հրամայեց, որ տանին մեկել օտեն, թագուհին էլ տեսնի։

Թոռճիքը թագավորի քովեն դուրս գալով, գնացին դրպա թագուհու սարայները։ Ղուլլուղտարները թագավորի ղրկած ձկի հըմար հայտնեցին թագուհուն, թե գուզե՞ որ էդ ձուկը բերեն, ինքն էլ տեսնի։

Թագուհին կը հրամայե որ,— Թե ձուկը էգ է, թող ներս բերեն, թե որձ է՝ թող չը բերեն։

Ձուկը թագուհու էդ խոսքն իմանալու վրա, էն սահաթին ամանի ջրի միջեն դրպա վեր կը թըռնի ու բանձր կը ծիծաղա։

Ձկի ծիծաղալը էն սհաթին թագավորին կը հայտնեն թե,— Հալահվալ, ըսման-էման, ձուկը վեր թռավ ու թագուհու խոսքի վրա ծիծաղաց, անպատճառ էդտեղ բանըմ կար, որ ձուկը իրան հայվան տեղովը ծիծաղաց։

Էս բանը թագավորի սրտին շատ մենծ վերք էղավ, ուզեց որ անպատճառ իմանա ձկի ծիծաղալու պատճառը։ Ըստուր համար էլ թոփ էնել տվավ իրան երկրի մեջ էղած, չէղած բոլոր խելոք ու գիտնական մարդիքը, որ բալքի թե, էդ ծիծաղելու պատճառն ըսեն իրան, սիրտը մեկ քիչ հանդարտի։ Հըմը հեչ մեկն էլ չկրցան էնպես բանըմ ըսել, որ խելքի մոտիկ էղներ։ Շատ հարց ու փորձ էնելեն ետև, դիմանան, որ Անատոլու երկրի մեջ մեկ ռանչպարի իմաս-

տուն տղա կա, թե որ իմանա՝ էն կիմանա, թե որ չէ՝ էլ մարդ չի կրնա իմանա։

Թագավորը էս որ իմացավ, էդ տղի ետևեն մարդ ղրկեց կանչելու։

Էս անգամ էլ տղի հերը, էլի առաջվա պես դեմ էր կայնել, չէր թողնի էրթալու, հըմը տղեն հորը միամտցրեց թե,— Դու քու բավականությունդ ա՛ռ ու ընձի թող էրթամ, աստված ողորմած է, ընձի չի կորցնե, ես էլի շուտ պրծնիմ գուքամ։

Տղի խոսքի վրա ռանչպարը կամք տվեց։ Մեկ քանի բեռ օսկի առավ ու տղին օրհնելով ճամբա քցեց։

Թագավորի մարդիքը տղին առան գնացին։ Երբոր հասան իրանց երկիրն ու թագավորի երեսն ելան, ռանչպարի տղեն օխտը տեղ թամալլահ էրավ, վրա ութին թագավորի փեշը համբուրեց ու ձեռները բարև բռնեց կայնավ։

Թագավորը ձկի ծիծաղալը մեկ մեկ գլխեն պատմեց, ինչպես որ եղել էր, ու ետև տղին հարցրեց, որ պատճառն իրան ըսե, բալքի թե մեկ քիչ ուրհաթի։

Ռանչպարի տղեն էր, երբոր ամեն ընչին լավ գլխու ընկավ, դարձավ թագավորին ըսավ,— Թագավորն ապրած կենա, ձկի ծիծաղալը գիտեմ ընչի հըմար է, հըմա չեմ ըսե։

Թագավորը շատ ստիպեց որ ըսե, հըմը, էդ տղեն էր, մեկ անգամ ինադին կայնավ ու չըսավ։ Թագավորը տեսավ, որ չի ըսե, ահ ու երկյուղ տալու համար, հրամայեց, որ տանին բանդ դնեն ու առավոտը գլուխը կտրեն։

Առավոտ լուսացավ, տղին նորեն բերին թագավորի քովը։ Թագավորն ու իրան մարդիքը էլի շատ ստիպեցին տղին, որ ըսե, հըմը չէղավ ու չէղավ։

Էս անգամ թագավորը շատ բարկացավ, ջանլաթներին հրամայեց, որ տանին գլուխը կտրեն։

— Թե որ էդպես է, տեր թագավոր,— խնդրեց տղեն,— ընձի հրաման տուր մեկ առակմ ըսեմ, էլի հրամանը քուկդ է, գլուխս զարկել կուտաս, տուր։

Թագավորը էս խոսքի վրա համաձայն էղավ։

— Թագավորն ապրած կենա,— ըսավ տղեն,— թագավորի մեկը ավղուշի գնաց, շատ պտտելուց ետև սաստիկ ծարվըցավ ու հետի մարդոցն ըսավ՝ ով որ ընձի մեկ աման ջուր տա, ինչ մալ ու դոլվաթ որ ուզե կուտամ (էնքան որ ծարավ էր)։ Հետի մարդիքը էս որ լսեցին, էս կողմ, էն կողմ ընկան, ման էկան, որ ինչ է ջուր գըտ-

նին... Վերջապես մարդի մեկը, մեկ փոս քարի մեջ ջուր գտավ ու թագավորին ձեն տվեց, որ գա խմե։ Թագավորն էկավ։ Ջուրը լցին ամանը ու տվին իրան, որ էն է պտի խմեր, թագավորի զաղարը, որ քովը բանձր քարի վրա կայնած էր, թաթով էնպես զարկեց, թագավորի ձեռի ջրով ամանը մեկ քով քցեց, որ հազար փշուր էղավ ու չթողեց խմելու։ Էս բանի վրա թագավորի բարկությունը էկավ, թուրը քաշեց զարկեց զաղարին, միջեն կիսեց, էրկու կտոր էրավ ու ըսավ.

— Անպիտան կենդանի, մի՞թե դու արժան չտեսար, որ ես էս մեկ թաս ջուրը խմեի, ծարավս կոտրեր։

Քովի կայնած խելոք մարդիքն ըսին,— Տեր թագավոր, թեև ըստեղ մեզի խոսք չի հասնի որ ըսենք, հըմը զուր տեղը էդ անասուն հայվանին ընչի՞ սրպանեցիր, հըլբաթ մեկ բան կար, որ էդ հայվանը իրան անլեզու-անբերան տեղովը էդպես էրավ... Բերեք առաջ մեր ձիանոց մեկին խմցնենք, փորձենք, տեսնենք ի՞նչ է, ետև դու էլ խմե։

Էն սհաթին ձիանոնց մեկի գյամը հանեցին, քաշեցին ջրի վրա, մեկ էրկու յուտում խմել-չէր խմել, մեկ էլ հանկարծակի տեղնուտեղը տրաքավ ու սատկավ։

Էս բանը թագավորը որ տեսավ, իրան էրածեն շատ փոշմնավ ու ըսավ,— Հազար ափսոս, որ իմ զաղարիս նըհախ տեղը սրպանեցի։

— Հիմի քուկդ է տեր թագավոր, մուղաթ կեցի, որ ընձի սրպանել տալուդ հըմար վերջը չը փոշմնես ու ըսես թե. «Ես ռանչպարի տղին ընչի՞ սրպանել տվի, կարելի է մեկ օրըմ ընձի պետք գար», դու գիտես, հըմը վերջը լավ մտածե։

Թագավորը էս խոսքերի վրա հրամայեց որ էլ չը սրպանեն, նորեն տանեն բանդ դնեն։

Էքսի առավոտը տղին էլի բերին թագավորի քովը։ Թագավորը շատ սաստեց, ստիպեց, որ ձկի ծիծաղալու պատճառը ըսե, հըմը տղեն սատանի ձիուն մեկ անգամ նստել էր, ինչ որ էրին-չէրին, չըսավ ու էլի իրան էշը կ'քշեր թե.

— Գիտեմ, հըմը չեմ ըսե։

Թագավորը սաստիկ բարկացավ ու ըսավ.— Տարեք էդ անպիտան տղի գլուխը զարկեք, որ աչքս էլ ըտուր չտեսնի։

Ռանչպարի տղեն էս անգամ էլ խնդրեց որ. — Թագավորն ապրած կենա, հրամանը քուկդ է, ինչպես որ գուզես էնպես էրա, հըմը մեկ առակմ էլ կա, թող ըսեմ, ընտուց ետև էլի սրպանել տուր։

Թագավորն էս անգամ էլ համաձայնեցավ։

Տղեն ասավ.— Թագավորի մեկը մեկ մենծ վազիրմ ուներ, էդ վազիրը մեկ օր թագավորին իրան տնով-տեղով ու աթպահով իրան տունը ղոնաղ կանչեց։ Ճաշը վերջանալուց ետև, որ քեֆերը թամամ էղավ, ուղեցան մեկ քիչ ուրախանալ, բերել տվին մեկ մեյմունըմ ու դուռը խաղցնել տվին։ էս ժամանակ թագավորը որ տեսավ, թե լավ խաղ ու խնտում կա, թագուհուն էլ դուռ կանչեց, որ մեկ քիչ էլ նա ուրախանա։ Թագուհին էրեխեն օրոցքի մեջը քնած թողեց, ու ինքը դուռ գնաց սեյր անելու։ (Հըմը էդ վախտը թագավորի ղաղարը մնաց օրոցքի քովը մենակ)[1]։

Մեկ էլ տեսնես, մեկ մեծ վիշապ օձ պատի ծակեն դուռ էկավ ու գուզեր, որ էրեխին խեղդե... Հըմը, բաշընա դեոնիմ զաղար, էս որ տեսավ թե չէ՝ վրա հասավ, վիշապի բկեն բռնեց, հետը փանչալամիշ էղավ-կռվավ ու վերջը էդ ղոճա ազրայել գազանին հաղթեց, կտոր կտոր էրավ...։ Ջամդաքը օրոցքի կողքը կիտուկ-թոփ էրավ, ու ինքը գնաց շեմի վրա նստավ, արնոտ թաթիկները կըլիզեր, որ իստկի։

Դռան քովի մարդիքը զաղարին արնթաթախ որ տեսան՝ զարմացան, հըմը թագավորը էնպես իմացավ, թե իրան որդուն կերել է էդ անպիտան հայվանը... էն սհաթին լտրանոց թուրը քաշեց՝ զաղարին զարկելով, միջեն կես էրավ։

Ըտուց ետև, ներս մտած վախտը տեսան, որ օրոցքը մեկ կողքի է շրջած։ Շիտկեցին, տեսան որ էրեխեն իրան հըմար սաղ սալամաթ քնած է։ Մեկ էլ հանկարծ աչքերը օրոցքի էն մեկել կողմը առավ, տեսան որ, ի՞նչ տեսնեն, մեկ ահագին ածգրհար վիշապ կտրտած վեր լցած է, իմացան որ զաղարի էրածն է։ էս բանի վրա թագավորն իրան էրածիցը թեև շատ փոշմնավ, հըմը էլ ի՞նչ օգուտ, արևն երդիկեն թռել էր, էղածն էղած էր։ Քանի քանի անգամ ասավ. «Հազար ափսոս, որ իմ հավատարիմ զաղարիս զուր տեղը սրպանեցի»։

— Հիմի քուկդ է, տեր թագավոր, մուղաթ կեցիր, որ ընձի սրպանել տալուդ հըմար վերջը չը փոշմնես ու ասես թե. «Ես ռանչպարի տղին ընչի սրպանել տվի, կարելի է մեկ օր ընձի շատ պետք գար»։

էն մեկել առավոտը տղին նորեն բերին թագավորի քովը։ Թագավորը էս անգամ շատ սաստիկ նեղեցավ, ոտները գետին ծեծեց ու ստիպեց, որ անպատճառ ձկի ծիծաղն իրան մեկնե։

Հըմը էդ տղեն էլի իրան զոռին էր տվել թե. «Գիտեմ, չեմ ասե»։ էս անգամ թագավորի հոգուն հասավ, հրաման տվեց թե,— Տարե՛ք

[1] Բացատրությունը ասացողինն է (Ս. Բ.)։

էդ սայմազ տղի գլուխը ասսա զարկեք, թող էլ իմ աչքիս չէրևա ու ես ըտուր երեսն էլ չը տեսնիմ։

Ռանչպարի տղեն էր, էս հեղին էլ թագավորի ոտ ու ձեռն ընկնելով՝ խնդրեց-աղերսեց ու ըսավ.

— Թագավորն ապրած կենա, մեկ առակմ մնաց, թո՛ղ էն էլ ըսեմ, ընտուց ետև արունս քեզի հալալ էղնի, ինչը որ կուզես, էնպես էրա։

Թագավորը ճարը կտրած, էս անգամ էլ համաձայնեցավ։

Ռանչպարի տղեն ըսավ.— Թագավորի մեկը մեկ ալ զուշըմ ուներ, որ շատ գուզեր-կընդուներ։ Մեկ օր էդ զուշը թագավորի ծընկին նստած վախտը, շատ տխրեցավ, քիթն ու թևերը կախեց։ Թագավորը էս բանը տեսնելով հարցուց թե. «Իմ զուշս, ընչի՞ էդպես տխրեցար, կուտ ու չո՞ւրդ է պակաս, թե ապրուստդ լավ չէ, որ էդպես քեֆդ բոզմիշ էրիր, ախր քեզի ի՞նչ էղավ»։ Աստծու հրամանքով զուշը լեզու ելավ ու ըսավ. «Թագավորն ապրած կենա, դու գիտես որ ես էլ հեր ու մեր, էլ ու գյուն ունիմ, պատի ծակեն խո չե՞մ դուս էկել, ախըր մեկ օր էլ չես ըսե թե, գնա հորդ ու մորդ տես ու էլի ետ արի... Ի՞նչ էնեմ որ չը տխրիմ»։

Թագավորն էս խոսքերն իմացավ թե չէ, հրամայեց որ դռները բանան, ու զշին ըսավ.— Քու հերդ օրհնվի, ըտուր հըմար էլ ընչի՞ ես նիաթդ կախել, դե՛ թռի գնա՛ ծնողացդ տես ու ընձնեն էլ շատ բարև էրա։

Զուշն էր, էս խոսքի վրա ուրախ-ուրախ դուս թռավ ու գնաց հորն ու մորը գտավ։ Ինչքան որ չէդնի՝ ծնողաց գութ էր, փաթթվան իրանց տղին, սիրեցին, սիրվան, պատիվ տվին ու տասնհինգ օրեն ետև, նորեն ճամբու դրին գնաց։ Դառնալու օրը, զուշը հորն ու մորը ըսավ,— Ախր ես եկա ձեզի տեսա ու նորեն կէրթամ, իմ թագավորիս ի՞նչ փեշքեշ տանիմ։

Հերն ու մերը էս անգամ բերին երկու հատ խնձորի կուտ տվին թե՝ թագավորին փեշքեշ տար։

Զուշը կտերը կտուցով բռնած, թռավ էկավ թագավորի զոնախների[1] պատրհանից ներս մտավ, դյո՞ւզ գնաց թագավորի քովը նըստավ ու կտերը ընտուր ծնկի վրա վեր դրեց։

Թագավորը զշի հալն ու ահվալը հարցնելեն ետև, կտերը ձեռն առավ, տեսավ, իրան մարդկերանցն էլ տեսցուց ու տվավ բաղմանչուն, որ տանի խաս բաղչեն տնկե, տեսնին, թե ինչ կէղնի։ Բաղմանչին էլ տարավ էդ կտերը տնկեց, բեսլամիշ էրավ, էրկու իրեք տար-

[1] Գալատի (Ս. Բ.)։

վա մեջ էղան էրկու հատ էնպես ֆիտան ծառ, որ ըտոնց թայը խառ բաղչի մեջը չկար... էդ տարին ամեն մեկի վրա մեկ հատ խնձոր էր բուսնել։ Բաղմանչին էս մտքի հետ էր, թե խնձորները լավ հասնին կարմրին, թագավորին փեշքեշ տանի, որ ինչ է, իրան խալաթն առնի։

Մեկ օր էլ գնաց տեսավ, որ խնձորի մեկը ծառեն վեր է ընկել։ առավ գնաց թագավորին։ Թագավորն ու իրան մարդիքը խնձորը որ տեսան, զարմացան ընտուր տեսքին, մենծությանը ու գունին էլ շատ հավնեցան։

Ետև վազիրներեն մեկն ըսավ,— Տե՛ր թագավոր, խնձորը տեսանք, ամեն ընչով շատ լավ է, հըմը կտրե ուտենք ու տեսնենք, թե հա՞մն ինչպես է։

Թագավորը շերեն հանեց ալմաստ կոթ դանակը, խնձորը կըպճեց-կտրեց ու էն է մեկ կտոր բերանը պտի գներ, որ ուտե, էն սհաթին ալպե-ալպ ղուշը թևով էնպես զարկեց թագավորի ձեռին, որ խնձորի դիլիմը օխտը գազ գնաց թագավորեն հեռու ընկավ...։ Էս արարմունքի վրա բոլորը շվարած մնացին։

Թագավորը էնպես բարկացավ, որ մեկեն բռնեց ղշի ոտներեն ճվտեց, էրկու կտոր էրավ, դեն գցեց ու ըսավ՝ չառլամիշ անտեր, քու բերածդ էր դեյի արժան չտեսա՞ր, որ ես էդ մեկ բրդուճն ուտեի։

Թագավորի մարդիքը զարմացք առած ըսին,— Թագավորն ապրած կենա, շատ կարելի է թե բանըմ կար, որ էդ անասուն հայվանը էդպես էրավ, դու նհախ տեղը ըտուր ընչի՞ էդ օրը քցեցիր։ Մեկ գառամ բերել տուր, թող էս կըպճրները ուտե, փորձենք տեսնինք, թե ինչ կէղնի։

Թագավորը հրամայեց, որ մեկ գառըմ բերեն։

Գառը բերին, խեղճ հայվանը մեկ քանի կպեճ կերել-չէր կերել։ մեկ էլ տեսան, որ էն սհաթին տրաքավ ու սատկավ։

Էս բանը որ թագավորը տեսավ, իրան էրածեն ինքն էլ փոշմընավ, հըմը էլ նատա՞ն սորա, բանը բանեն անցել էր։ Ըսավ. «Հազար ափսոս իմ ղշիս, որ նրհախ տեղը արունքը մտառ։

Ըտուց ետև, սրտի հերսուն, թագավորը հրամայեց, որ էքսի օրը բաղմանչու ու ընտուր կնկա գլուխը զարկեն։

Բաղմանչին էս բանը որ իմացավ, քիթ ու մռութ կախած, չայրեն թթվեցրած գնաց տուն։ Կնիկը տեսնելով, որ մարգի ռավուշը տեղը չէ, ունքերը կախ են, հարցուց թե. «Ընչի՞ ես տխուր»։

Մարգն ըսավ որ,— Ի՞նչըղ տխուր չէղնիմ, երբոր այսինչ բանի

հրմար (բոլոր եղելությունը պատմեց)[1] թագավորը էգուց մեր էրկուսի գլուխն էլ զարկել պտի տա։

— Թե որ էդպես է,—ասավ կնիկը,—գնա էն մնացած մեկ խընձորն էլ բեր, քան թե մեզի սրպանեն, մենք ուտենք ու մեռնինք։

Մարդը տեսավ, որ կնիկը լավ կըսե, գնաց խնձորը բերեց, կըտրեցին կերան, հրմը մեռնելու տեղակ ամեն մեկն էղան 15 տարեկան շահել մարգիք։

Էն մեկել օրը թագավորը մարդ ղրկեց բաղմանչու ու ընտուր կնկա ետևեն, որ բերել տա գլխները ղարկե... տեսավ որ էրկուսն էլ էղել են 15 տարեկան... Հարցուց իմացավ, որ մնացած խընձորը կերել են, որ գառի պես սատկին, հրմը իրանց բախտեն շահելցել են...։

Վերջը բաղմանչին ասավ,— Թագավորն ապրած կենա, էդ խընձորները անմահական խնձոր են, էն մեկը, որ ծառեն ինքն իրան վեր էր ընկել շատ կարելի է թե օձը էկել յաղուել էր, ընտուր հրմար գառը կէրավ թե չէ՝ սատկավ։

Էս բանի վրա, թագավորը բաղմանչու կյանքը բաշխեց իրան։

— Հիմի տեր թագավոր, ես իմ առակս ասի պրծա, ասուց ետև հրամանը քուկդ է, թե գուզես ընձի սրպանել տուր, հրմա մուղաթ կեցի, որ վերջը չփոշմնիս ու ասես թե. «Ես ռանչպարի տղին ընչի՞ սրպանել տվի, կարելի մեկ օր ընձի պետք գար»։

Թագավորը է՛ս անգամ տղին անուշությունով ասավ.— Դե՛ ձկի ծիծաղալու պատճառն ասա, որ կյանքդ քեզի բաշխեմ։

Տղեն պատասխան տվավ թե,— Ես իմ իրեք առակս ասի պրրծա, ղաթի էդ բանն էլ պտի ասեմ, հրմը աստեղ չեմ ասե։ Մեկ ձմերուկմ ա՛ռ, էրթանք թագուհու քովը, ընտեղ ուտենք ու ասեմ, որ թագուհին ինքն էլ իմանա։

Թագավորը էն սհաթին մեկ ձմերուկմ բերել տվավ, իրան ալմաստ կոթ դանակը ղարկեց վրեն։ Տղեն ձմերուկը առավ թևի տակն ու գնացին։

Ներս մտած վախտը, թագավորը որ թագուհու հետ կը կխոսեր, տղեն մեկ կերպով սամթ քցեց, թագավորի դանակը գողցավ պահեց։

Խոսալը որ վերջացրին, թագավորն ասավ,— Դե հիմի ասա տեսնենք ի՞նչ էր ձկի ծիծաղալու պատճառը։

— Շատ լավ,— ասավ տղեն,— առաջ ձմերուկն ուտենք ետև ասեմ, թե ինչ էր։

---

[1] Բացատրությունը պատմողինն է (Ս. Բ.)։

Երբոր ձմերուկը պտի կտրեին, տեսան որ դանակը չկա։ Էսքով դանակ, էնքով դանակ, դանակն էղավ մեկ փչուր հացի կտոր ու կորավ, չկա որ՝ չկա։

Ռանչպարի տղեն ըսավ,— Թագավորն ապրած կենա, ըստեղ մեզնեն ղայրի էլ մեկ ուրիշ մարդ չկա, որ մեղքն առնենք, թե դանակը էն մարդը գողցավ, թե գողցանք՝ մենք գողցանք։ Էկեք առաջ իմ վրես աշեցեք, թե որ չը գտաք՝ ետև սրով՝ ամենքի վրեն էլ կաշենք։

Էս որ ըսավ, իրան շորերը բիրատի հանեց, մեկ մեկ ամեն տեղ աշեցին, տեսան որ չկա։ Երբոր Թագավորը գուզեր իրան շորերը հանել, տղեն չը թողեց թե,— Հըլը դու կեցիր, տե՛ր Թագավոր, ես գյուման ունիմ թե, դանակը Թագուհու քովը կայնող, կանանչ շորերով ջառիի[2] քովն էղնի, թո՛ղ առաջ ընտուր վրեն աշենք։

Երբոր ուզեցան աշել, Թագուհին վրա էկավ ու բարկանալով ըսավ,— Էդ ի՞նչ կէնեք, գլխներուդ հե՞տ կը խաղաք, ո՞վ է տեսել, յա թե չէ լսել, որ տղամարդի քով կնիկարմատը, էն էլ աղջիկ, շորերը հանե, ամոթ չէ՞, էս ի՞նչ ոըսվայություն է։

Ռանչպարի տղեն էս որ իմացավ, ըսավ,— Թե որ էդպես է, ես էլ ձեզի ձկի ծիծաղալու պատճառը չեմ ըսե։

Էս պատճառի վրա Թագավորը շատ սաստիկ բարկացավ ու հրամայեց, որ ինչ էլ գուզե էղնի, անպատճառ պետք է ջառիեն շորերն հանե, որ վրեն աշեն, կորած դանակը ման գան։

Թագավորի հրաման էր, ո՞վ կրնար դիմադարձ կայնի, էն սհաթին թևեն քաշելով, զոռով առաջ բերին ու շորերն հանել տվին, տեսան որ օհո՞... Ագամա զավակ էր, չէ թե Եվայի դուստր։

Էս օրինակով մնացած քառասուն ջառիեքին էլ տեսան, որ բիրադի էն ջրով ջաղացն են, տեղնուտեղը պաղան մնացին...

Ըտուց ետև տղան ըսավ,— Տեսա՞ր, տեր Թագավոր, թե ձկի ծիծաղալը ընչի հըմար էր։ Քու Թագուհիդ հավատարիմ էրևալու հըմար, ձկի էգ ու որձը կը հարցներ, հըմա ինքը իրան խոսքին տեր չէր, էդ պատճառով էլ խեղճ անբան անասունը վրեն ծիծաղացել է։

Թագավորը սրտի հերսեն տղի խոսքը կտրեց ու էն սհաթին հրամայեց, որ Թագուհու ու ինչ որ կա-չկա, բոլոր ջառիեքի գլուխները զարկեն, հոտերը աշխարքի երեսեն կտրեն։

Ռանչպարի տղին էլ իրան տղա էրավ, բոլոր մալ ու դոլվաթը

---

[1] Հերթով (Ս. Բ.)։
[2] Նաժիշտ (Ս. Բ.)։

ընտուր ճակատը գրեց... Իրան անցմանեն ետև թախտն ու թագը տվեց ընտուր, էրավ թագավոր։

Էդ տղեն էլ գիր գրեց հորն ու մորը բերեց իրան քովը։ Աստծու տված մեկ կտոր հալալ մալ ու դոլվաթը, ձեզնով անուշ, քանի որ սաղ ու կենդանի էին կերան, խմեցին ու վայելեցին, մինչև իրանց մեռնելու օրը։

Երկնքեն իրեք խնձոր իջավ, մեկն՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ սրտով ուզողին։